

## ՄԵՐ ՏԱՆ ԴԻՄԱՑԻ ԽԸՆՔ

(Պատկեր)

Աւագ Հինգշաբթի՝ մարդկութեան Փրկչի անմահ պատարագի, անպատում խոնարհութեան ոտնալուալի և ապա Տիրոջ անարդ մատնութեան, նորա փրկարար չարչարանքի և խաչելութեան աստուածալին սուրբ լիշտակների տօնի երեկոյ է:

Կրօնասէր ու բարեպաշտ ժողովրդի խուռն բազմութիւն լցուած բոլոր եկեղեցիներում և ջերմեւանդ արտով աղօթքի կեցած, երկիւղածութեամբ ուշադիր է սրբանուէր պաշտամունքի հրաշագործ հանդիսին:

Փառահեղ օրուայ վեհագոյն ծէսի կատարումն և հոգեզմայլ շարականների ու գգազգած ժամերգութեան եղանակները միախառնուելով քաղաքիս ամեն կողմից լսուող անթիւ զանգակների տխուր զողանջիւնին՝ երկրայող մարդկանց պաղերես կերպարանքներին անգամ լրջմտութեան և մատախոհ հայեացքի տեսք են տալիս:

Մեր տան հինաւուրց կենող խորին ու հաստատուն հաւատի ութսունամեալ, հոգով մտքով առողջ ամրակազմ Մարթան, որ իւր մանկութիւնից ի վեր ժամասիրութեան, պահեցողութեան և կրօնական ամեն տեսակ ջերմեռանդութեան նուիրեալների բուն տիպար էր հանդիսացած՝ այս ազատարար զոհաբերութեան օրը սգաւորի զգեստներ հագած սուրբ սեղանին մօտենալով՝ արժանանում է «քաղցր Տիրոջ» մարմնի և արեան ճաշակելուն:

Երեկոյեան և ապա գիշերալին սգոյ սրբազան ժամասացութեան ներկայլինելուց լետոյ բազմաթիւ աղօթողներ, ի թիւս որոց և մեր Մարթան, ոմանք վառած

մոմերը ձեռքին, վերադառնում են տուն՝ տանելով իրանց բարեպաշտ սրտերում յաւիտենական ճշմարտութեան համար խաչ հանած աստուածալին Վարդապետի անարատ սիրոյ ու անխախտ հաւատի վառ զգացումները:

Կէս գիշեր է արդէն: Բնութիւնն էլ ասես ներդաշնակելով սրբամատոյց տօնի տիրագին տրարողութեան՝ խառն ու անհստատ է դարձել օրուալ եղանակը: Աւագ լրացրւինը ծածկուած կիսախաւար ամպերով լիշեցնում է մարդկանց իրանց ազատութեան համար Գողգոթայի վրայ զոհուած աստուածորդու Խաչելութեան այն խսկական օրը, երբ կատարելապէս խաւարեցաւ բարձր երկնքում երկրագնդիս այս մեծ լուսաւորը:

Մեր պատկառելի Մարթան՝ իւր սուրբ անուանակցին հետևելու նախանձախնդիր այս պառաւը, իւր մըշտավառ հոգեսէր զգացումներով այնպէս մտամփոփ՝ թէեդանդաղ, բայց հաստատ քայլերով մօտենում է մեր տան մեծ դռներին, որ մտնէ, անցնի բագով և գնայ իւր փոքրիկ, պարզ բնակարանը հոգով ու մարմնով ստկաւ ինչ հանգստանալու համար... սակայն երեսը դարձնելով ճիշտ դիմացի լուտերական եկեղեցու մուտքի վրայ տնկած մեծ ոսկէզօծ խաչին, որին Աստուծոյ ամեն օր մի քանի տասնեակ տարիներ շարունակ, դըռներում կանգնած, երկրապագելով զերմ աղօթքներ էր մտքով ուղղում, կիսաթափանց մթութեան մէջ ինչ որ անորոշ բաներ է նշմարում: Մի քայլ առաջ գնալով և ուշադրութեամբ դիտելով տեսնում է, որ այն յարափայլ խաչի մօտ սանդուխներ են դրուած և քանի մի մարդկանց խառնիխուռուն, փոքրաթիւ ամբոխից ոմանք եկեղեցու գոներումն են կեցած և ոմանք էլ շտապով տուն ու դուրս են անում այնտեղից:

Մարթան կարծելով թէ այնտեղ՝ լուտերական սըրբավայրում, գուցէ գեռ շարունակում են նսլն գիշերուալ խորհրդաւոր պաշտամունքը, միեւնոյն ժամանակ խառն կասկածներ է յանկարծ ճնում իւր սրբասէր սրտում... Բայց և այնպէս, կրկին և կրկին երեսը խաչ հանելով ու մտքումն աղօթք մըմնջալով գնում, մըտ-

նում է իւր սենեակը... Այստեղ հոգեպէս կարծես սակաւ ինչ անհանգիստ հանւում է զուտով, որ հանգչի փւր անկողնում։ Սակայն ոչ, փափուկ անկողինը չէ կարողանում հանգստացնել մեր պառաւին, որ մնացած գիշերը, մինչև լուս նոյն խառն, անորոշ կասկածներով մտալոյզ լինելով՝ մի ժամ գոնէ չէ ննջում իւր սովորական խռմփալի քնով, որով և մտատանջութեան մէջ է ձգում իւրալիններին...

Եւ իրաւ որ Մարթան սկսում է զգալապէս յուզուիլ՝ մտքից չը հեռացնելով մեր տան դիմացի խաչի և մօտը դրած սանդուխների մասին կասկածները...։ Եւ իսկոյն երեակալելով ներկայացնում է իրան Գողգոթալի իսկական խաչը, փշեալ պսակով վրան խաչած ծիրոջ մարմինը, որից կաթկաթում են վարդագոյն արեան նուիրական կաթիլները, կողքի սանդուխը և խաչելութեան այլ վշտագին պարագաները...։ Այսպէս ահա չարչարանաց եօթնեկի վերջին օրերի և մանաւանդ նոյն աւագ հինգշաբթուալ բոլոր արարողութիւնները մանրամասնաբար ասես իրօք պատկերանում են վերստին Մարթաի ալժմ արգէն յուզեալ երեակալութեանը։ Նորից լսելի են լինում նորա սուր, իսկ նոյն վայրկենին շփոթուած ականջներին ուրացման, մատնութեան, չարչարանաց և խաչելութեան տասներկու գլուխ «սըբոլ Աւետարտնի Յիսուսի» տիրածալն ընթերցմունքը, որ ջերմեռանդ պառաւի համար կարծես իւր աչքի առջև նոր կատարուող գործողութիւններ են։ գործողութիւններ, որոնց ապա հետեւում է լալագին ողբք, որ նախ կարգում և լետոյ մեղմ եղանակելով ասում են մեր անլուր մեղքերի թողութեան համար խաչուող Փրկչի բերանից...։

«Ո՞ւր ես, քաղցրիկ, մալր իմ խղճալի,

«Արի և տես զորդիդ ցաւալի։

«Քանզի հրէալքն զիս անարգեցին,

«Եւ թագաւոր զիս անուանեցին»...։

Աւագ ուրբաթի լուսագէմն է։ Առաւօտու ժամերգութիւն չկայ ալսօր։ Չորս կողմը մառախուղով պատած, տիսուր երկինքն էլ լալիս է բարակ անձրևի կաթիլներ թափելով անօրէն երկրի վրայ։

Յուզեալ երեակայութեամբ իրապէս պատկերացրած  
այն գիշերուալ բոլոր տեսիլքից հօգեպէս ու մարմնա-  
պէս սաստիկ ճնշուած՝ հազիւ հազ կարողանում է Մար-  
թան վերկենալ անկողնից և երեսը կիսալուալ մի կերպ  
հագնում է յարաշտապ... Ողբալի հայեացք դարձնելով  
իւր սենեակի անկիւնում ամրացրած անշէջ կանթեղով  
մշտալոյս պատկերին սուրբ Աստուածածնալ, թւում է  
նորան, թէ ահա արտասուքներ է թափում նոյնպէս  
Աստուածումայրը...

Ո՞հ, ի՞նչու այս առաւօտ ևս ժամերգութիւն չը  
կալ, մատածում է Մարթան բոլորովին ալլալուած...  
Ա՞խ, ափսոս որ գիշերային ժամին կից եղաւ առաւօ-  
տու ժամը... Մեծ զմալմամբ կուզենար ինքը նորից  
լսել նոյն սգալի ժամասացութիւնը եկեղեցում և կրկին  
զգալ, հիանալ ու հօգով լագենալ սրբանուէր խնկար-  
կութեան այն անուշահոտ բուրմամբ, որ բարակ ջղար-  
շի պէս տարածուում է սուրբ տաճարի սգապատ ներսը  
և գարնեալ յալ և սգալ աստուածալին խաչեցեալին...  
Բայց եթէ ժամերգութիւն չը կայ, եկեղեցին... Եկե-  
ղեցին հօ այնտեղ է լաւիտեանս լաւիտենից... ո՞հ,  
տէր Աստուած... Դողդողալով երեսը խաչ է հանում  
պառաւը, համբուրում է իւր սենեակի սուրբ պատկերը  
և մտքումը կցկտուր, ոգեսպառ շնչով «Հայր մեր» քա-  
ղելով գուրս է գալիս իւր բնակարանից որ ուղղէ հիմա  
արդէն իւր թուլ, ծալունդ քալերը գէպի մեր սուրբ  
տաճարը...

Բայց հազիւ թէ փողոցի մեծ դռներին հասած՝  
անձրևանման առատահոս արտասուքով ալրուած աչքե-  
րով տեսնում է Մարթան զարհուրելով, թէ սանդուխ-  
ների վրայ բարձրացել են մարդիկ և սղոցում են մեր  
տան դիմացի այն ոսկեզօծ մեծ խաչը... Ո՞հ, Քրիստո-  
սի խաչն է այն, որ ահա սղոցելով կամենում են տա-  
պալել անօրէնները... Նփոթուած, հօգով.սրտով խիստ  
ալէկոնուած շնչասպառ ձախնով հարցնում է նա դռնե-  
րի մօտ կեցած և անցնող ոմանց անձանց՝ նմանապէս  
սաստիկ գալթակղուող, թէ ովքեր են արդեօք և ինչ-  
պէս են համարձակուում իրանց մեղսասէր ձեռքերսպ  
սղոցել, կտրել մեր անմահ Փրկչի ամենազօր նշանը...

—Քրիստոնեաներ են, պատասխանում են պառա-  
ւին, քրիստոնեաներ, որ իրանց եկեղեցի-ազօթարանը  
խափանելով՝ ալժմ վարձու են տուել պանդոկի համար,  
ուստի և հեռացնում են սուրբ խաչը այնտեղից...

—Ինչպէս թէ քրիստոնեաներ... ալդ ի՞նչ սրբա-  
պիղծ քրիստոնեաներ են անօրէններին հաւասար. . իրո-  
պոտ, շնչարգել ձայնով հազիւ թէ արտասանում է Մար-  
թան՝ վերջին ծայր տապալուած հոգեկան անհնարին  
զալրոյթից, մինչդեռ շարունակում են սղոցել խաչը...

Եւ նոյն ակնթարթին Մարթաի կրօնական գաղա-  
փարի հայեացքը՝ թէ ուր որ էլ հիմնեցին քրիստոնէա-  
կան սուրբ տաճարը իւր փրկչական խաչով, այնտեղ էլ  
անսասան պիտի մնայ մինչև Քրիստոսի երկրորդ գա-  
լուսար, եթէ չեն քանդում անհաւատ թշնամիները, հիմն  
ի վեր կործանուելով՝ ինքն էլ տեսնում է որ բոլորովին  
կտրեցին խաչը, ուշաթափ ընկնում, փռւում է դունե-  
րի շէմքում կաթուածահար լինելով եռանդամոլ անսահ-  
ման բորբոքումից...

## Ն. ՅԱՐՈՅ

1903 ապրիլ

